

ցութիւն Շղթայակիրի Փարիզի արքեպս. Տը Ֆլէօրի կարդինալին հետ. 1739ին գրաւոր համաձայնութիւն Հայոց եւ Յոռնայ Ս. Տեղերու խնդրոց մասին. 1739ին Շղթայակիր ազգ. սեփականութեանց համար նոր հրովարտակ հանել կուտայ, միջնորդութեամբ Գաղղիոյ դեսպան Վիրնէօվի, կը վերադառնայ Երուսաղէմ 1740ին. Լատինաց կողմէն՝ Հայոց Իւղաբերից սեղանին սեփականութեան ռանձգութեանց գէմ բողոքի գրեր կը գրէ, 1742ին, առ Թագաւորն Գաղղիոյ Լուզովիկոս ԺԵ, առ Ժողովն կարդինալաց, առ Վիրնէօվ դեսպանն Գաղղիոյ (Սաւաթն եւ Ժոյն.): Գրիգոր պարբ. կը վախճանի ՌՃՂԸ = 1749 փետր. ԺԲ.ին (ՄՁ. Թ. 677) եւ կը Թաղուի Ս. Փրկչի վանքին մէջ. Պարոնտէր պարբի. դամբարանին մօտ. իր անունն ալ՝ նմանապէս կ'սկսի յիշատակուիլ գոհութիւն եւ փառաքանութիւն քարոզին մէջ: Ըստ գրաւոր յիշատակարանաց, Շղթայակիրի գրամով Կիսրոսի Քիթրէալի մէջ կը գնուի 1744ին երեքուկէս արտավար հող. (Կիսրոս Կոզի, էջ 71): Շղթայակիր Պոսոյ իր ողբերգութիւնը գրի առած էր՝ որ 1866ին հրատարակուած է (Սիօն էջ 122. 141. 184):

Ղալաթիոյ Ազգ. Մտահնադարանի Ծաղկափայլ Հասումով խորագրով եւ յատկապէս Շղթայակիրն համար կազմուած ձեռագրի մը յիշատակարանը՝ գրուած Ս. Յակոբի միաբան Պօղոս վրդ.էն, Շղթայակիրի պրասիբութեան համար կուտայ հետեւեալ վկայութիւնը, զոր հոս կը զնենք նոյնութեամբ. «Մտեալ եղեւ եւս առ գրատունն վաղ ուրեմն անտէրունջ մնացեալս. ուր ետես զգիրն զոմանս եղծեալս, զոմանս քայքայեալս, զոմանս ցեցակերեալս՝ աւաղեաց եւ ցաւեաց զսիրտ վեհիս, վասն որոյ գրեաց զգիրս առ ի վերագրեալ հարազատն իւր Յովհաննէս պատրիարքն ի Բիւզանդիոյ՝ զի նա առաքեսցէ զտպագրիչ Գրիգորն աստ. որպէս յորդորելն եկն ի սուրբ վանս քրիստոսեան եւ հրամանաւ վեհիս ձեռնամուխ եղե յաջողմամբն Աստուծոյ զեղծեալսն գրել. զքայքայեալսն վերակերտել եւ զամենեւեմ քակտեալսն նորոգել եւ կազմել. եւ արար տյնպէս. որք իւրաքանչիւրում Յիշատակարանոյն բացատրին ընթերցողացն» (Կոլոս էջ 53. ՄՁ. Թ. 1950)

Շղթայակիր երեք անգամ կաթողիկոս ընտրուած է, բայց հրաժարած է. (Սիօն 1866, էջ 142): Իր օրով, ՌՃՀԳ (= 1725) Թուին, Պոսէն եկող եւ ծովամոյն եղող հայ ուխտաւորաց յիշատակին, նոյն պատրիարքին կողմէն կանգնուած է հետեւեալ յիշ-